



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

21 հուլիսի 2017Ա.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Անահիտ Չորբաջյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Անահիտ Չորբաջյանը 03.07.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածի 1-ին կետին հակասող ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածը և վերջինումս կատարել ուղղում հետևյալ կերպ՝ «Անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված քաղաքացու, կամ նրա ժառանգի ներկայանալու դեպքում դատարանը նրա դիմումի հիման վրա վճիռ է կայացնում նախկինում կայացրած իր վճիռը

վերացնելու մասին: Այդ վճռի հիման վրա վերացվում է գույքի նկատմամբ խնամակալությունը, և չեղյալ է համարվում քաղաքացիական կացության ակտերի գրանցամատյանում նրա մահվան վերաբերյալ գրառումը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 1999 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 2-1572 քաղաքացիական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով Շուշիկ Հովհաննեսի Հարությունյանը /սույն գործով դիմողի մայրը/ ճանաչվել է անհայտ բացակայող: Արաբկիր համայնքի որդեգրման, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2000 թվականի հուլիսի 21-ի թիվ 45 որոշմամբ անհայտ բացակայող ճանաչված Շուշիկ Հարությունյանի գույքի նկատմամբ խնամակալ է նշանակվել հանձնաժողովի նախագահի տեղակալ Լև Մարությանը: «Կոմիտաս Ինք» մահվան բյուրոյի կողմից տրված՝ մահվան հաստատման՝ ֆրանսերենից թարգմանության քաղվածքի համաձայն՝ Շուշիկ Հարությունյանը մահացել է 2003 թվականի հունիսի 15-ին:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 21-ի վճռով Ա. Չորբաջյանի դիմումը՝ իր մորը՝ Շուշիկ Հարությունյանին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ վճիռը վերացնելու պահանջի մասին, մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը, Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի հուլիսի 21-ի թիվ ԵԱՔԴ/4467/02/15 վճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի համաձայն՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված քաղաքացու ներկայանալու դեպքում դատարանը նրա դիմումի հիման վրա վճիռ է կայացնում նախկինում կայացրած իր վճիռը վերացնելու մասին: Այդ վճռի հիման վրա վերացվում է գույքի նկատմամբ խնամակալությունը, և չեղյալ է համարվում քաղաքացիական կացության ակտերի գրանցամատյանում նրա մահվան վերաբերյալ գրառումը: Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը

կարող է վերացնել միայն անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու հայտնվելու և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Սույն պարագայում, անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը վերացնելու մասին դիմում ներկայացրել է անհայտ բացակայող ճանաչված Շուշիկ Հարությունյանի դստեր՝ Անահիտ Չորբաջյանի ներկայացուցիչը, ով վերը նշված օրենսդրական նորմերի հիման վրա նման իրավասությամբ օժտված չէ...»: ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ մերժել է Ա. Չորբաջյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ դիմումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Ինչպես դիմողը նշում է իր դիմումում. «Վիճարկվող նորմը հակասահմանադրական ճանաչվելու և համապատասխան ուղղում կատարվելու դեպքում Դիմողի դեմ կայացրած դատական ակտերը վերանայելու (գործը նորոգելու) հնարավորություն կստեղծվի, ինչն՝ իր հերթին, Դիմողի իրավունքների պաշտպանության և վերականգնման հավանականություն կստեղծի՝ նրանց, նախ վճռաբեկ, ապա՝ վերաքննիչ բողոքների՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո քննության առարկա դարձնելու համար»: Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ դիմողի՝ գործով կայացված դատական ակտը վերանայելու նպատակն ինքնին չի կարող սահմանադրական վեճի առաջացման հիմք հանդիսանալ: Դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել որպես խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկում:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է

այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց..., ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով...: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է նաև, որ դիմումն ակնհայտ անհիմն է: Այսպես, դիմողը չի ներկայացրել որևէ իրավական հիմնավորում վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Դիմողն իր դիմումի՝ «Դիմողի իրավական դիրքորոշումը՝ հիմքերն ու փաստարկները» մասում պարզապես վկայակոչում է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 5-րդ հոդվածները, ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման է հանդիսանում դիմումի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումների առկայությունը: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում: Մինչդեռ դիմողը պնդում է, որ. «Եթե օրենսդիրն՝ ի ապահովումն ՀՀ Սահմանադրության 5-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթը շարադրած լիներ բավարար հստակությամբ, կամ դրանցում նախատեսված լիներ այնպիսի հստակեցում, ինչպիսին է ժառանգը, ապա Դիմողի սահմանադրական իրավունքները խախտված չէին լինի»:

Հետևաբար, դիմողը հիմնավոր և պատշաճ ձևով չի հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել, և չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Անահիտ Չորբաջյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

21 հուլիսի 2017 ՄԻՅԻՅԿ
ԵՍԻՁ/2-18